

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵԼԱԿԱՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ *

ՀՏԴ 338/ 330.1

DOI: 10.52063/25792652-2024.1.20-225

ՄՅԵՐ ՕԹԱՐՅԱՆ

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդ,
ք. Իջևան, Հայաստանի Հանրապետություն
mher.otaryan@ysu.am
ORCID: 0009-0000-7316-7109

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել Հայաստանի Հանրապետությունում համայնքների եկամուտների հավաքագրման առջև ծառացած մարտահրավերները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գույքահարկին և հողի հարկին՝ որպես առաջնային եկամուտների աղբյուրների: Բացի այդ, ուսումնասիրության նպատակն է ընդգծել համայնքներում եկամուտի աղբյուրների արդիականացման նշանակությունը՝ զարգացման միտումներին համապատասխանեցնելու համար՝ դրանով իսկ ներկայացնելով բարելավման առաջարկություններ:

Ուսումնասիրության շրջանակում մեր առջև դրված են եղել հետևյալ խնդիրները՝ բացահայտել համայնքների եկամուտների ձևավորմանը նպաստող առաջնային աղբյուրները, ուսումնասիրել առկա մարտահրավերներն ու բացերը համայնքների եկամուտների հավաքագրման գործող համակարգում և ընդգծել համայնքներում եկամտի աղբյուրների արդիականացման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Հետազոտության իրականացման համար օգտագործվել են փաստաթղթերի վերլուծության, վերացարկման (աբստրահման), ինդուկցիայի և վիճակագրական տվյալների վերլուծության մեթոդները: Այս հետազոտության շրջանակում ուսումնասիրել ենք տարբեր հրապարակախոսական և գիտական կյուլթեր, ինչպես նաև ուսումնասիրելով պատմական զարգացումը՝ պատմականի և տրամաբանականի զուգակցման մեթոդով գտել ենք դրանց պատճառահետևանքային կապը:

Արդյունքում, հաշվի առնելով համայնքներում առկա բարելավման ենթակա ուղղությունները և զարգացման միտումները՝ ներկայացրել ենք առաջարկներ: Դրանք վերաբերում են նոր հարկատեսակի՝ հյուրանոցի հարկի ներդրմանը, ոլորտային միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության վերափմաստավորմանը՝ նոր արդիական հաստիքների ներդրման կամ մասնագիտական վերապատրաստումների իրականացման միջոցով:

Հիմնաբառեր՝ գույքահարկ, հողի հարկ, եկամուտների հավաքագրում, հյուրանոցի հարկ, եկամուտի աղբյուրների արդիականացում, եկամուտների դիվերսիֆիկացիա, հասարակական խորհուրդ, համայնքների խոշորացում:

Նախաբան

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) համակարգի ձևավորման և վերափոխումների ողջ ընթացքում մշտապես

* Հոդվածը ներկայացվել է 05.03.2024թ., գրախոսվել՝ 17.03.2024թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2024թ.:

առանցքային են եղել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և ֆինանսական միջոցների կառավարման միջև առկա համապատասխանության խնդիրները: Ըստ Էռլթյան, ՏԻՄ-երի առաջնահերթ գործառույթն է սեփական լիազորությունների շրջանակում լուծել համայնքային նշանակության խնդիրները (ՏԻՄ ՀՀ օրենք, հոդված 3): Այս համատեքստում ՏԻՄ-երը պետք է ունենան կարողություններ և ֆինանսական ռեսուրսներ, որոնք կապահովեն համայնքներում ոլորտային տարբեր հիմնախնդիրների լուծման իրենց լիազորությունները իրականացնելը (ՀՀ սահմանադրություն, հոդված 183):

ՀՀ կառավարության N44 արձանագրային որոշմամբ՝ 2011 թվականին ընդունվեց «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»՝ հիմք դնելով տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հերթական փուլին: Սույն հայեցակարգում նշվում էր, որ համայնքներում կան բազմաթիվ խնդիրներ՝ բյուջեների հավաքագրման տեսանկյունից: Գյուղական բազմաթիվ համայնքներում (հատկապես՝ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Սյունիքի մարզերում) եկամուտների հավաքագրման մակարդակը չի գերազանցում 50%-ը: Բոլոր մարզերում առկա են նախորդ տարիներից կուտակված ապառքներ: Ասվածից հնարավոր է եզրակացնել, որ համայնքների՝ առանց այդ էլ սուղ ֆինանսական միջոցները, չունենալով հավաքագրման բավարար մակարդակ, չէին կարող հնարավորություն ընձեռնել տեղական ինքնակառավարման մարմիններին իրականացնելու նույնիսկ պարտադիր լիազորությունները (Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ, հավելված):

ՏԻՄ-երը մեծ ակտիվություն չեն ցուցաբերում միջազգային դրամաշնորհային կազմակերպությունների հայտարարած աջակցության, ոլորտային բարելավումներին ուղղված ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ, ինչը կնպաստեր համայնքներում տարբեր խնդիրների՝ ենթակառուցվածքների զարգացմանը:

Միջազգային դրամաշնորհային կազմակերպությունների հետ աշխատանքը պահանջում է որոշակի փորձառություն, կոմպետենցիաներ և առանձնահատկություններ: Օրինակ՝ այս կամ այն դրամաշնորհային ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է ծանոթանալ տվյալ կազմակերպության գործունեության ուղղություններին և զուգահեռաբար ունենալ այդ առանձնահատկություններից բխող ծրագրային փաթեթների մշակման, կազմման և ներկայացման կարողություններ: Հարկ է նկատել, որ այս համատեքստում ՏԻՄ-երի կարողությունների ու հմտությունների պակասն է, որ հաճախ խոչընդոտում է համայնք-միջազգային դրամաշնորհային կազմակերպություն հարաբերությունների հաստատումը և կայացումը:

Վերոշարադրյալ պնդումները ուղենշելու համար դիտարկենք համայնքների եկամուտներից տրված հաշվետվությունները միայն 2022 թվականի համար (Աղյուսակ 1)¹ (ՀՀ ֆինանսների նախարարության տված «Համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվություն (2023 թ. տարեկան)» հաշվետվությունը):

Աղյուսակ 1

Համայնքների եկամուտները պաշտոնական դրամաշնորհներից

	Հազար դրամ
Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	807

¹ Աղյուսակ 1-ը կազմված է հեղինակի կողմից՝ հաշվի առնելով համայնքների ներկայացրած հաշվետվությունները:

Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	0
Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	362 254,6
Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	787 372,2
Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	71 767 549,5
Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	19 446 292,6
Ընդամենը	92 364 276,6

Ակնհայտ է, որ պաշտոնական դրամաշնորհներում գերակշռում են պետության տրամադրած պաշտոնական դրամաշնորհները, իսկ միջազգային կազմակերպություններից կամ այլ պետություններից ստացված դրամաշնորհների թիվը ընդհանուրի միայն 1,24%-ն է:

Կարևորելով և առանցքային համարելով համայնքային բյուջեների դիվերսիֆիկացումը՝ առաջարկում ենք համայնքներում ներդնել միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու պրակտիկա՝ մի քանի ուղղություններով և աշխատակիցների մասնագիտական վերապատրաստումներ՝ հետևյալ ուղղություններով.

- Նոր ֆինանսական ներդրումներ փնտրելու և ներգրավելու ձևաչափեր, ֆոնդիայթիայթման մեթոդներ և մոտեցումներ, դրամաշնորհային ծրագրերի մշակման առանձնահատկություններ և հնարավոր դոնորների քարտեզագրման ձևեր:


- Այս գործընթացներում կարող են ներգրավվել համայնքում ոլորտային գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք կարող են աջակցել թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական ուղղություններով:

- Համայնքապետարաններում ֆոնդիայթիայթման մասնագետների ներգրավում, որոնք համայնքի կողմից դրամական պարզեցացում կստանան՝ ծրագրային ամբողջական փաստաթղթերի կազմման և դրամաշնորհի ստացման դեպքում (օրինակ՝ համայնքի կողմից ստացած դրամաշնորհի 1%-ի չափով):

Համայնքների համար հիմնական եկամուտներ են հողի հարկը և գույքահարկը, իսկ հյուրանոցային հարկը գործնականում չի կիրառվում: Գործող օրենսդրությամբ՝ համայնքները չեն կարող սահմանել հարկեր, որոնք օրենսդրությամբ արգելված են (ՏԻՄ ՀՀ օրենք, հոդված 79,3): Այդ պատճառով առաջին հերթին անհրաժեշտություն կա, որպեսզի գործող եկամուտի աղբյուրները ավելի արդիականացվեն:

Հյուրանոցային հարկը զբոսաշրջության հարկի ենթատեսակ է: Նրա կիրառման դեպքում համայնքները կարող են ունենալ զգալի ֆինանսական մուտքեր: Հայաստանը՝ որպես հարուստ մշակույթ ունեցող երկիր, մշտապես հետաքրքրել և գրավել է աշխարհի տարբեր երկրներում բնակվող մարդկանց: Դիտարկենք 2016-2022 թվականների զբոսաշրջային այցելությունների դինամիկան: Դիտարկենք առաջին գրաֆիկը.

Գրաֆիկ 1¹ (ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հաշվետվությունները, և armstat.am վիճակագրական կայքը)



Չբուսաշրջային այցելություններն ըստ տարիների

2016-2022 թվականների զբոսաշրջային այցելությունների դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016-2019 թվականներին զբոսաշրջիկների ՀՀ այցելությունների դինամիկան ունեցել է դրական աճ: Չբուսաշրջիկների այցելությունների քանակը կտրուկ նվազել է 2020 թվականին: Այցելությունների նվազման միտումը, մեր կարծիքով, պայմանավորված է եղել օբյեկտիվ պատճառներով՝ կորոնավիրուսային համաճարակ, 44-օրյա պատերազմ Հայաստանի և Ադրբեյջանի միջև: Ստավախություն կար, որ պատերազմից հետո ՀՀ-ն կկորցնի իր զբոսաշրջային գրավչությունը, սակայն վիճակագրությունը ցույց է տալիս, որ այն կրկին աճելու միտում ունի: Միայն 2023 թվականին ՀՀ այցելող զբոսաշրջիկների քանակը աճել է մինչև 2,2 միլիոն, որը երկրի համար բացարձակ ռեկորդ է (ՀՀ ԷՆ Չբուսաշրջության կոմիտեի տարեկան ամփոփիչ միջոցառում): Այս թվերի կտրուկ աճը պայմանավորված է նաև ՌԴ-Ուկրաինա պատերազմով, քանի որ ՀՀ այցելած արտասահմանցիների գրեթե 50%-ը հենց Ռուսաստանից են՝ շուրջ 790000 մարդ: Մինչդեռ նախորդ տարիներին այն կազմել է 350000 մարդ (Համաշխարհային զբոսաշրջության կազմակերպության կայքէջ):

Վերլուծության հիմնական բովանդակությունը վկայում է այն մասին, որ ՀՀ-ն իրապես գտնվում է զբոսաշրջիկների հետաքրքրությունների տիրույթում: Հարկ է նկատել, որ ՀՀ այցելող զբոսաշրջիկների մեծամասնությունը կարճաժամկետ կեցության կարիքները հոգալու նպատակով հիմնականում հաստատվում է հյուրանոցներում, հյուրատներում: Այս համատեքստում էապես առաջ է մղվում հյուրանոցային հարկի ներդրման նպատակահարմարությունը: Ուստի, հիմք ընդունելով վերոշարադրյալ վերլուծությունը՝ առաջարկում ենք, որ հյուրանոցի հարկը ՀՀ-ում սահմանվի որպես նոր, տեղական հարկատեսակ՝ հետևյալ ձևաչափով:

Հյուրանոցի հարկատեսակի ներդրման դեպքում համայնքապետարաններին կից կձևավորվի հասարակական խորհուրդ, որը կմիավորի տվյալ համայնքի հյուրանոցային, հյուրատնային բիզնես սեկտորի ներկայացուցիչներին: Համայնքներում ավագանու ինստիտուտը պետք է որոշի հարկատեսակի դրույքաչափը՝ հաշվի առնելով սեզոնայնությունը, հյուրանոցների տեղակայման վայրը, եկամտաբերության մակարդակը և այլն: Համայնքներում հյուրանոցների և հյուրատների ներկայացուցիչները, հիմք ընդունելով իրենց ներքին քաղաքականությունները, կսահմանեն տվյալ հարկատեսակը վճարողին՝ հյուրանոց, հյուրատուն կամ զբոսաշրջիկ:

¹ Գրաֆիկը կազմել է հեղինակը:

Այս գործընթացի արդյուքում հավաքագրված ֆինանսական ռեսուրսների ներդրման մասին համայնքապետարաններին կից ձևավորված հասարակական խորհուրդները կմշակեն զբոսաշրջային գրավչության ավելացմանը միտված առաջարկների փաթեթներ, որոնք կներկայացվեն ավագանու հաստատմանը: Հյուրանոցի հարկատեսակի ներդրման պարագայում անհրաժեշտ է նաև հաշվի առնել սեզոնայնությամբ պայմանավորված այցելությունների քանակի նվազումը: Այժմ դիտարկենք երկրորդ աղյուսակը.


Աղյուսակ 2¹ (ՀՀ վիճակագրական կոմիտե)

Զբոսաշրջության այցելություններն ըստ ամիսների


	Հուն	Փետ	Մարտ	Ապրլ	Մայ	Հուն	Հուլ	Օգոստ.	Սեպ	Հոկտ	Նոյ	Դեկտ
2018	113 217	89 331	120 704	133 205	115 962	132 331	177 456	248 827	184 153	161 095	117 603	93 421
2019	119 548	95 837	117 765	135 597	146 783	153 901	202 322	288 260	221 507	191 772	140 376	110 685
2020	142 370	106 637	58 788	-	-	-	-	-	16 471	20 534	16 642	34
2021	23 345	26 088	37 698	41 881	52 908	64 101	105 127	143 168	124 522	98 970	85 762	66 738
2022	94 339	72 262	84 197	96 938	116 495	129 908	188 856	261 834	198 074	154 847	144 576	130 429

«Զբոսաշրջության այցելություններն ըստ ամիսների» աղյուսակի վերլուծությունից նկատում ենք, որ զբոսաշրջիկների հոսքը նվազում է հունվարից մինչև մարտ ժամանակահատվածում: Այս շրջանների համար առաջարկում ենք, որ հյուրանոցային հարկի դրույքաչափը նվազի՝ այդ կերպ աջակցելով և՛ հյուրանոցներին, և՛ զբոսաշրջիկներին: Միևնույն ժամանակ կարող ենք պնդել, որ այդ ֆինանսական միջոցներն այնքան էլ մեծ չեն զբոսաշրջիկների համար, քանի որ զբոսաշրջությամբ հետաքրքրված են հիմնականում վճարունակ մարդիկ: Դիտարկենք երկրորդ գրաֆիկը.

Գրաֆիկ 2 (Համաշխարհային զբոսաշրջության կազմակերպության կայքէջ)



¹Աղյուսակը կազմել է հեղինակը:



Ըստ էության, տվյալները հավաստում են, որ զբոսաշրջիկները միայն 2022 թվականին միջինում ծախսել են 1411 \$/մարդ: Դա այժմյան փոխարժեքով հաշվվում է մինչև 600000 դրամ: Այդ մարդկանց համար էական ազդեցություն չի ունենա, եթե այդ գումարը վճարվի հենց զբոսաշրջիկների գրպանից: Նաև առաջարկում ենք զբոսաշրջիկ՝ երկարատև այցելության պարագայում հյուրանոցային հարկը զեղչել: Այդ հարկը կարող է վճարել նաև հյուրանոցի սեփականատերը:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ հյուրանոցային հարկի ներդրումը կապահովի համայնքների համար լրացուցիչ եկամուտներ և կավելացնի ապակենտրոնացման մակարդակը:

Անդրադառնալով համայնքների բյուջեների եկամուտներին: Ստորև ներկայացված են տարբեր տարիների ընթացքում Հայաստանի համայնքների եկամուտների կազմը և կառուցվածքը: /Աղյուսակ 1/

Աղյուսակ 1¹

Համայնքների բյուջեների եկամուտների կազմը և կառուցվածքը 2014-2022թթ

Դ/Դ	Ցուցանիշ	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
1	Ընդամենը եկամուտներ մլրդ դրամ	114,4	128,2	128,6	126,6	127,5	144,4	156,1	175,4	189,8	248,2
2	Հարկեր և տուրքեր	23,3	23,8	24,6	26,8	26,3	31,0	30,8	38,3	42,4	50,9
3	Այլ եկամուտներ	35,5	45	48,8	42,6	41,4	46,6	43,8	50,4	52,4	86,6
4	Պաշտոնական դրամաշնորհներ	55,6	59,4	55,3	57,2	59,7	66,8	81,5	86,7	95	110,7
5	Տեսակարար կշիռ %	100	100	100	100	100	100	100	100	100	100

¹ Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հաշվի առնելով համայնքների ներկայացրած հաշվետվությունը:

6	Հարկեր և տուրքեր	20,3	18,5	19,1	21,1	20,6	21,4	19,7	21,8	22,3	20,5
7	Այլ եկամուտներ	31	35,1	37,9	33,6	32,5	32,2	28	28,7	27,6	34,9
8	Պաշտոնական դրամաշնորհներ	48,6	46,3	43	45,2	46,8	46,4	52,3	49,5	50,1	55

Համայնքների խոշորացման գործընթացը սկսվել է 2015 թվականից («Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», 12): Այս տվյալներից կարող ենք եզրակացնել, որ 2016 թվականին եկամուտները աճել են 14,2 միլիարդով, որը, մեր կարծիքով, բավականին մեծ թիվ է, իսկ 2015 թվականի համեմատ այն աճել է շուրջ 200 միլիոնով: 2017 թվականին եկամուտները պակասել են շուրջ 2 միլիարդով: Սակայն, երբ բացում ենք ընդհանուր տվյալները, այդտեղ պարզ երևում է, որ միայն 2016 թվականին ընդհանուր եկամուտներից հարկեր և տուրքերը կազմել են 24, 5 միլիարդ, իսկ 2017 թվականին այն աճել է՝ դառնալով 26, 7 միլիարդ, որը հիմնականում ավելացել է անշարժ գույքի, հողի հարկի և այլ եկամուտներից, այդ թվում՝ գույքահարկը փոխադրամիջոցների համար: Սա շատ մեծ ու կարևոր ցուցիչ է և արտացոլում է այն իրողությունը, որ խոշորացված համայնքները սկսել են ավելի հետևողական լինել և, եթե փոքր համայնքի պարագայում ավելի շահակապաճ են եղել միմյանց բարեկամական կապերով, այժմ այդ կապվածությունը, կարելի է ասել, երկրորդվում է՝ մեծ տեղ հատկացնելով օրենքին:

Սակայն, երբ հարց է առաջանում, թե այդ պարագայում որն է նման կտրուկ անկման պատճառը, մեր կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվեց, որ այն պայմանավորված է պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների կրճատմամբ:

Այն 2016 թվականին եղել է 38,6 միլիարդ, իսկ 2017 թվականին՝ 30,3 միլիարդ: Սա ևս կատարված մեծ քայլ է, որպեսզի համայնքները դառնան ինքնաֆինանսավորվող և պետական բյուջեից շուրջ 8,3 միլիարդ այս մասով խնայողություն է արվել, որը նույնպես ցույց է տալիս խոշորացման դրական կողմերից: Այդ փուլից սկսած՝ ընդհանուր եկամուտները սկսել են ավելի աճել, և 2022 թվականին այն դարձել է շուրջ 189,8 միլիարդ: Այս թիվը 2014 թվականի տվյալներից մեծ է շուրջ 75,4 միլիարդով: Համեմատության համար նշենք՝ 2014 թվականին հարկերից և տուրքերից ձևավորված եկամուտները կազմել են 23,2 միլիարդ, իսկ 2022 թվականին այն դարձել է 42,4 միլիարդ, այսինքն՝ գրեթե 2 անգամ ավելացել է համայնքների մուտքերը այս հոդվածով: 2023 թվականին եկամուտներն էլ ավելի են աճել և եկամուտները դարձել են ընդամենը 248,2 մլրդ: Մեր կարծիքով, այս տվյալները լուրջ ցուցիչ են այն բանի, որ համայնքների խոշորացումից հետո տեղի է ունեցել համայնքների բյուջեների մուտքերի կտրուկ աճ:


Այս ամենով հանդերձ՝ այժմ անդրադառնանք հարկերի և տուրքերի՝ գույքային հարկեր անշարժ գույքից տողին: /Աղյուսակ 2/

Գույքային հարկեր անշարժ գույքից 2016-2023 թթ.

	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար (հազար դրամ)	3951052	3761321	4169390	3780112	4209779	3616750	1741731	1285146	1182832
Գույքահարկ համայնքների վարչա-կան տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար (հազար դրամ)	5585882	5702110	5933647	5698596	6331459	5892922	2764330	1027381	826266
Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ	---	---	---	---	---	---	7844374	11692514	14894964


Վերոնշյալ տվյալները ցուցում են, որ համայնքային բյուջեի համար մուտքեր ապահովող հողի հարկը և գույքահարկը ամեն տարի փոփոխվում են: Այդ փոփոխությունները ժամանակ առ ժամանակ աճում են, հետո նվազում: Ավելի պատկերավոր լինելու համար դիտարկենք գծապատկերը.

Գծապատկեր 1²



¹ Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հաշվի առնելով համայնքների հաշվետվությունները:

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից: Հաշվի է առնվել համայնքների հաշվետվությունները: Հղումը՝ https://www.minfin.am/hy/page/hamayngi_byujei_hashvetvutyunner/



Այս գծապատկերները արտացոլում են այն իրողությունը, որ հավաքագրման մասով էական փոփոխություններ չկան: Ավելի շատ մտահոգիչ են այդ տատանումները: 2018 թվականի անկումը, մեր կարծիքով, պայմանավորված էր մարդկանց հետհեղափոխական հոգեվիճակով, իսկ 2020 թվականի անկումը պայմանավորված էր համաճարակով և պատերազմով: 2021 թվականին ուժը կորցնում է հողի հարկի մասին օրենքը և հարկային բարեփոխումներով ներառվում է հարկային օրենսգրքում¹: 2021 թվականից հետո համայնքների բյուջեների եկամուտների տողի մեջ է ներառվել համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկը, որը սկսել է կտրուկ աճել և իր հերթին հանգեցրել է հարկերի և տուրքերի ավելացմանը: Այս ամենով հանդերձ՝ այդ հարկատեսակների հավաքագրումը միշտ էլ մնում է համայնքի համար դժվար լուծելի խնդիր: ՀՀ ֆինանսների նախարարության տված հաշվետվություններից յուրաքանչյուր տարի տարեկան հաստատված պլանի և փաստացի հավաքագրված գումարների մեջ առկա են մեծ տարբերություններ: Պլանը հիմնականում թերակատարվում է. երբեմն նույնիսկ կիսով չափ է հավաքագրվում (Ֆինանսների նախարարության կայքէջ):

Գործող օրենսդրությամբ համայնքները չեն կարող սահմանել հարկեր, որոնք օրենսդրությամբ արգելված են: Այդ պատճառով առաջին հերթին անհրաժեշտություն կա, որ գործող եկամուտի աղբյուրները ավելի արդիականացվեն: Ինչ վերաբերում է հողի հարկի և գույքահարկի գծով ֆիզիկական անձանց պարտավորությունների կատարման շահադրժան մեխանիզմներին, ապա դա հնարավոր է իրականացնել ԱԶՆԱ վարկային բյուրոյի միջոցով: Ֆիզիկական անձանց հարկային պարտավորությունների մասին տեղեկատվության մուտքագրումը տվյալ բյուրոյի տեղեկատվական համակարգ, հնարավորություն կտա առավել տեղեկացված լինելու հողօգտագործողների ֆինանսական պարտավորությունների կատարման, կարգապահության և ներկա պարտավորությունների մասին, ինչպես նաև տեղեկացված լինելու ֆինանսական պարտավորությունների նկատմամբ անպարտաճանաչ ֆիզիկական անձանց մասին:

Կարծում ենք, որ նման պարագայում ցանկացած անձ կձգտի և շահագրգռված կլինի ժամանակին և ամբողջապես կատարելու իր հարկային պարտավորությունները, որպեսզի կերտի «դրական պատմություն» և կօգտագործի այն՝ ֆինանսական ծառայություններից արտոնյալ պայմաններով օգտվելու համար: Ինչպես հայտնի է, բոլոր այն ֆիզիկական անձինք, որոնք իրենց վարկային պատմության մեջ ունենում են ժամկետանց պարտավորություններ, զրկվում են ֆինանսաբանկային

¹ Օրենքն ուժը կորցրել է 01.01.2021 թվականին՝ 04.10.16 ՀՕ-165-Ն օրենքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով:

հաստատությունների առաջարկած ծառայություններից օգտվելու հնարավորությունից: Երբ խոսքը վերաբերում է ՀՀ-ում հոգստագործողների կողմից գյուղատնտեսական նպատակով վարկ վերցնելուն, ապա ակնհայտ է, որ դա նրանց գործունեության իրականացման առանցքային և ամենակարևոր միջոցն է, ուստի որևէ ֆիզիկական անձ չի ցանկանա՝ իր վարկունակության վրա որևէ հանգամանք բացասական ազդեցություն թողնի: Այս նույն մոտեցումը հնարավոր է իրականացվել նաև գույքահարկ ունեցող այլ անձանց նկատմամբ:

Խիստ մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ նախկինում շատ են նախադեպերը, երբ հողի մասնավորեցման ընթացքում անօրինական կերպով օտարվել են տարածքներ, որոնք հիմա անհատների համար ծառայում են որպես կապիտալ: Այս դաշտում ևս պետք է իրականացվի օրենսդրական փոփոխություն:

Առաջարկում ենք, որ նման պարագայում գործի սեփականության նկատմամբ գործի աճողական դրույքաչափի կիրառումը: Օրինակ՝ այն ֆիզիկական անձինք, որոնք հողը ձեռք բերելուց հետո շուրջ 5 տարի ոչինչ չեն ձեռնարկել տվյալ հողամասում, նրանց նկատմամբ սկսի գործել ավելի բարձր հարկեր: Դա մի կողմից կմոտիվացնի մարդկանց հողի օգտագործման համար, մյուս կողմից՝ տնտեսության համար կունենա դրական ազդեցություն: Այն մարդիկ, որոնք 5 տարվա մեջ չեն ունենա հնարավորություն այդ հողը օգտագործելու, ստիպված կլինեն վաճառել: Այս մասով անհանգստություն է առաջանում, որ մարդիկ կսկսեն իրենց հողերը նվիրաբերել հարազատներին և ակամայից խուսափել ավելացող դրույքաչափից և այլ խոչընդոտներից: Այս պարագայում անհրաժեշտ է նաև, որ օրենքի միջոցով պարտադրվի այն հանգամանքը, որ նվիրատվության կամ առուվաճառքի պայմանագիր կարող է կնքվել միայն այն պարագայում, երբ վճարված է այդ հողին առնչվող ամբողջական հարկը: Դեռևս խորհրդային տարիներին ստեղծված բազմաթիվ գործարաններ անկախացումից հետո մասնավորեցվել են: Այս նույն կարգավիճակում են գտնվում նաև բազմաթիվ շենքեր, որոնց սեփականատերերը ոչ վաճառում են, ոչ էլ ներդրում կատարում: Այս պոտենցիալն օգտագործելու համար առաջարկում ենք երկարաժամկետ չօգտագործվող շենքերի և շինությունների վրա կիրառել գույքահարկի աճողական դրույքաչափ:

Այսպիսով՝ հիմք ընդունելով ՀՀ-ում ՏԻՄ-երի տարբեր բյուջետային հնարավորությունները, որոնք պայամանավորված են մի շարք գործոններով՝ համայնքները ամբողջապես չեն կարողանում կատարել իրենց լիազորությունները: Ուստի՝ առաջանում է նոր տնտեսաիրավական կարգավորման անհրաժեշտություն, որոնք միտված կլինեն ՏԻՄ-երում եկամուտների հավաքագրման դիվերսիֆիկացմանը և արդիականացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանյան, Մանվել. *Տարածքային կառավարումը Հայաստանի Հանրապետությունում*, Միվա-Պրես, Երևան, 2004:
2. Թումանյան, Դավիթ. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ուղիները, Երևան, 2005 թ.:
3. Թումանյան, Դավիթ. *Տեղական ինքնակառավարումը Հայաստանում* (2011 թ.), Գիրք 5, Երևան, 2012 թ.:
4. Սուվարյան, Յուրի և ուրիշներ, *Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում*, «Տնտեսագետ», Երևան, 2015:
5. Օրդյան, Էդուարդ. *Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Նոր զարգացումներ*, «Պետական ծառայություն», Երևան, 2002:
6. Зотов, Владимир, и Зинаида Макашова, *Муниципальное управление*, Питер Воронеж, 2004.

7. Spengler, John, and Muzaffer Uysal. "Considerations in the hotel taxation process" Volume 8, Issue 4, *International Journal of Hospitality Management*, 1989, 309-316.

8. «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշմամբ, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=66135>

9. «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշում, http://www.mta.gov.am/u_files/file/Haycakarg.pdf

10. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», 2006:

11. «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք, ընդունված 07.05.2002թ., ՀՕ-337 <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150060>

12. Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն, Համայնքների բյուջեների ամփոփ հաշվետվություններ, https://www.minfin.am/hy/page/hamaynqi_byujei_hashvetvutyunner/

13. Հողի հարկի մասին ՀՀ օրենք Հ.Ն.-1005-1, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=140557>

14. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք - <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123322>

15. Համաշխարհային տուրիստական կազմակերպության պաշտոնական կայքէջ - <https://www.unwto.org/europe/armenia>

16. Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն պաշտոնական կայքէջ - <https://www.minfin.am/hy>

17. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ - <https://armstat.am/am/>

WORKS CITED

1. Aleksanyan, Manvel. «Taratsqayin karavarum@ Hayastani Hanrapetutyunum». Miva press, Erevan ["Territorial Administration in the Republic of Armenia". Miva press, Erevan] 2004. (in Armenian)

2. Tumanyan, Davit. Hayastani Hanrapetutyun texakan inqnakaravarman hamakargi zargacman uxiner@. Erevan ["Ways of Development of the Local Self-government System of the Republic of Armenia". Yerevan] 2005. (in Armenian)

3. Tumanyan, Davit. «Texakan inqnakaramarum@ Hayastanum» girq 5, Erevan ["Local Self-government in Armenia", Book 5, Yerevan] 2012. (in Armenian)

4. Suvajyan Yuri ev urishner. «Petakan karavarman ev texakan inqnakaravrman zargacman himnaxndirner@ Hayastani Hanrapetutyunum» Erevan ["Problems of Development of State Administration and Local Self-government in the Republic of Armenia" Yerevan] 2015. (in Armenian)

5. Odyan, Eduard. «Texakan inqnakaramarman himmunqner, Nor zargacumner». Erevan, ["Fundamentals of Local Self-government, New Developments" Yerevan] 2003. (in Armenian)

6. Zotov, Vladimir, i Zinaida Makapsheva. «Municipalnoe upravlenie». V. ["Municipal Management, V..] 2004. (in Russian)

7. Hamaynqneri xoshoracman ev mijhamaynqayin miavorumneri d'evavorman hayecakarg, 2011 t. noyemberi 10-i nisti N 44 ard'anagrayin voroshmamb, [Concept of

Community Consolidation and Formation of Inter-Community Associations, by protocol decision of the meeting N 44 of November 10, 2011], <https://www.irtek.am/views/act.aspx?aid=66135>. (Available: 10.03.2024) (in Armenian)

8. Hamaynqneri xoshoracman ev mijhamaynqayin miavorumneri d'evavorman hayecakarg, HH kar'avarut'yan 2011 t'. noyemberi 10-i nisti N 44 ard'anagrayin voroshum, [Concept of Community Consolidation and Formation of Inter-Community Associations, Protocol decision of the RA Government meeting N 44 of November 10, 2011], <https://www.irtek.am/views/act.aspx?aid=66135>. (Available: 05.02.2024) (in Armenian)

9. «Hayastani Hanrapetut'yan Sahmanadrut'yun» [The Constitution of The Republic of Armenia], 2006. (in Armenian)

10. «Teghakan inqnakar'avarman masin HH o'renq, y'ndunvac' 07.05.2002t'. [Law of the Republic of Armenia on Local Self-Government, adopted on 05/07/2002], HO'-337 <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150060> (Available: 18.02.2024) (in Armenian)

11. Hayastani Hanrapetut'yan Finansneri naxararut'yun, Hamaynqneri byujeneri amp'op' hashvetvut'yunner [Ministry of Finance of the Republic of Armenia, Summary Reports of Municipal Budgets], https://www.minfin.am/hy/page/hamaynqi_byujei_hashvetvutyunner/ (Available: 01.02.2024) (in Armenian)

12. Hoghi harki masin HH o'renq [RA Law On Land Tax] H.N.-1005-1, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=140557> (Available: 01.03.2024) (in Armenian)

13. «Hayastani Hanrapetut'yan harkayin o'rensgrqum p'op'oxut'yunner ev Iracumner katarelu ev 2017 t'vakani dektemberi 21-i «Hayastani Hanrapetut'yan harkayin o'rensgrqum p'op'oxut'yunner ev Iracumner katarelu masin» HO'-266-N o'renqum p'op'oxut'yunner ev Iracumner katarelu masin» o'renqum p'op'oxut'yun katarelu masin» HH o'renq [RA Law "On Amendments and Additions to the Tax Code of the Republic of Armenia and Amendments to the Law HO-266-N of December 21, 2017 "On Amendments and Additions to the Tax Code of the Republic of Armenia"] - <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123322> (Available: 11.02.2024) (in Armenian)

14. Hamashxarhayin turistakan kazmakerput'yan pashtonakan kayqE'j [Official Website of the World Tourism Organization] - <https://www.unwto.org/europe/armenia> (Available: 08.03.2024) (in Armenian)

15. Hayastani Hanrapetut'yan Finansneri naxararut'yun pashtonakan kayqe'j [Official website of the Ministry of Finance of the Republic of Armenia] - <https://www.minfin.am/hy> (Available: 15.01.2024) (in Armenian)

16. Hayastani Hanrapetut'yan vitwakagrakan komitei pashtonakan kayqe'j [Official website of the Statistical Committee of the Republic of Armenia] - <https://armstat.am/am/> (Available: 13.02.2024) (in Armenian)

CURRENT PROBLEMS OF COMMUNITY REVENUE COLLECTION AND WAYS OF IMPROVEMENT

MHER OTARYAN

*Yerevan State University,
Faculty of Economics and Management,
Chair of Management and Entrepreneurship, Ph.D.Student,
Ijevan, the Republic of Armenia*

The purpose of this research is to analyze the challenges faced by communities in the Republic of Armenia in revenue collection, paying particular attention to property tax and land tax as primary revenue sources. In addition, the aim of the study is to highlight the importance of upgrading income sources in communities to meet development trends, thereby providing recommendations for improvement.

Within the framework of the study, we set the following tasks: to identify the primary sources contributing to the formation of community incomes, to study the existing challenges and gaps in the current system of community income collection and to emphasize the need for and importance of modernization of income sources in communities. The methods of document analysis, abstraction, induction, and statistical data analysis were used to carry out the research. In the framework of this research, we studied various public and scientific materials, and by studying the historical development, we found their cause-and-effect relationship using the method of combining the historical and the logical.

As a result, considering the directions for improvement in the communities and the development trends, we presented recommendations. They refer to the introduction of a new type of tax, the hotel tax, rethinking of cooperation with international sector organizations through the introduction of new modern positions or the implementation of professional training.

Keywords: *Property Tax, land tax, revenue collection, hotel tax, modernization of revenue sources, revenue diversification, public council, community enlargement.*

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ СБОРА ДОХОДОВ С ОБЩИН И ПУТИ ЕГО УЛУЧШЕНИЯ

МГЕР ОТАРЯН

*кафедра общей экономики факультета экономики
Иджеванского филиала
Ереванского государственного университета,
г. Иджеван, Республика Армения*

Целью данного исследования является анализ проблем, с которыми сталкиваются общины Республики Армения при сборе доходов; при этом особое внимание уделяется налогу на имущество и земельному налогу как основным источникам доходов. Кроме того, цель исследования – подчеркнуть важность модернизации источников дохода в общинах для соответствия тенденциям развития и представить рекомендации по ее улучшению.

В рамках исследования перед нами были поставлены следующие задачи: выявить источники, способствующие формированию доходов общин, изучить

существующие проблемы и упущения в действующей системе сбора доходов с общин, а также подчеркнуть необходимость и важность модернизации источников их доходов. Для проведения исследования были использованы методы анализа документов, абстракции, индукции и статистического анализа данных. В рамках данного исследования мы изучили различные материалы социального и научного характера, а также, изучая историю развития вопроса, я, определили их причинно-следственную связь, используя метод синтеза исторического и логического.

В результате исследования учитывая направления оптимизации общин и тенденции их развития, мы представили некоторые рекомендации. Речь идет о введении нового вида налога – гостиничного налога, о пересмотре принципов сотрудничества с организациями международного сектора посредством введения новых востребованных должностей или проведения профессиональных тренингов.

Ключевые слова: *налог на имущество, земельный налог, сбор доходов, налог на гостиницы, модернизация источников доходов, диверсификация доходов, общественный совет, расширение общин.*